				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	0.000	0.000	0.000
				- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	500.000	500.000	0.000
				- Հատուկ նպատակային այլ կյութեր	4269	0.000	0.000	0.000

				- Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	4727	0.000	0.000	0.000
				- Այլ նպաստներ բյուջեից	4729	0.000	0.000	0.000
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	30000.000	0.000	30000.000
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	0.000	0.000	0.000
				- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	10000.000	0.000	10000.000
				- Ամենօրյակ ակտիվներ	5131	0.000	0.000	0.000
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	2000.000	0.000	2000.000
2820	8	2	0	Մշակութային ծառայություններ, որից՝		95422.641	92191.600	3231.041
2821	8	2	1	Գրադարաններ		0.000	0.000	0.000
2822	8	2	2	Թանգարաններ և ցուցասրահներ		0.000	0.000	0.000
2823	8	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ		95422.641	92191.600	3231.041
				- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	0.000	0.000	0.000
				- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	0.000	0.000	0.000
				- Էներգետիկ ծառայություններ	4212	0.000	0.000	0.000
				- Կոմունալ ծառայություններ	4213	0.000	0.000	0.000
				- Կապի ծառայություններ	4214	0.000	0.000	0.000
				- Տեղակատվական ծառայություններ	4234	0.000	0.000	0.000
				- Շտաբային ընդհանուր առաջնություններ	4239	0.000	0.000	0.000
				- Մասնագիտական ծառայություններ	4241	0.000	0.000	0.000
				- Գրասենյակային կյուբեր և հագուստ	4261	0.000	0.000	0.000
				- Կենցաղային և հանրային սննդի կյուբեր	4267	0.000	0.000	0.000
				- Հատուկ նպատակային այլ կյուբեր	4269	0.000	0.000	0.000
				- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	91191.600	91191.600	0.000
				- Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ արևմտյան կազմակերպություններին	4655	1000.000	1000.000	0.000
				- Պարտադիր վճարներ	4823	0.000	0.000	0.000
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	2999.841	0.000	2999.841
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	231.200	0.000	231.200
2824	8	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ		0.000	0.000	0.000
				- Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	0.000	0.000	0.000
				- Շտաբային ընդհանուր առաջնություններ	4239	0.000	0.000	0.000
				- Գրասենյակային կյուբեր և հագուստ	4261	0.000	0.000	0.000
				- Հատուկ նպատակային այլ կյուբեր	4269	0.000	0.000	0.000
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ (տող 4534 + տող 4537 + տող 4538), այդ թվում՝	4639	0.000	0.000	0.000
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	0.000	0.000	0.000
				- Ոչ կուրսական հիմնական միջոցներ	5132	0.000	0.000	0.000
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	0.000	0.000	0.000
2825	8	2	5	Արվեստ		0.000	0.000	0.000
				- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	0.000	0.000	0.000
				- Էներգետիկ ծառայություններ	4212	0.000	0.000	0.000
				- Կոմունալ ծառայություններ	4213	0.000	0.000	0.000
				- Կապի ծառայություններ	4214	0.000	0.000	0.000

				- Լեյքին գործուղումներ	4221	0.000	0.000	0.000
				- Շտեմատուր բնույթի այլ ծառայություններ	4239	0.000	0.000	0.000
				- Մասնագիտական ծառայություններ	4241	0.000	0.000	0.000
				- Գրասենյակային կուրթեր և հագուստ	4261	0.000	0.000	0.000
				- Գեներալային և հանրային սենյի կուրթեր	4267	0.000	0.000	0.000
				- Հասուկ նպատակային այլ կուրթեր	4269	0.000	0.000	0.000
				- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	0.000	0.000	0.000
2826	8	2	6	Կինեմատոգրաֆիա		0.000	0.000	0.000
2827	8	2	7	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում		0.000	0.000	0.000
				- Լվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	0.000	0.000	0.000
2830	8	3	0	Օստիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակական ծառայություններ, որից՝		0.000	0.000	0.000
2831	8	3	1	Հեռուստատեղեկատվություններ		0.000	0.000	0.000
				- Տեղակատվական ծառայություններ	4234	0.000	0.000	0.000
2832	8	3	2	Հրատարակչություններ, խմբագրություններ		0.000	0.000	0.000
2833	8	3	3	Տեղեկատվության ձեռքբերում		0.000	0.000	0.000
2840	8	4	0	Կրթական և հասարակական այլ ծառայություններ, որից՝		3000.000	3000.000	0.000
2841	8	4	1	Երիտասարդական ծրագրեր		0.000	0.000	0.000
2842	8	4	2	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ		3000.000	3000.000	0.000
				- Շաբաթիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	4621	0.000	0.000	0.000
				- Լվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	3000.000	3000.000	0.000
2843	8	4	3	Կրթական և հասարակական այլ ծառայություններ		0.000	0.000	0.000
2850	8	5	0	Հանգստի, մշակույթի և կրթի գծով հետազոտական և տախագծային աշխատանքներ, որից՝		0.000	0.000	0.000
2851	8	5	1	Հանգստի, մշակույթի և կրթի գծով հետազոտական և տախագծային աշխատանքներ		0.000	0.000	0.000
2860	8	6	0	Հանգիստ, մշակույթ և կրթի (այլ դասերին չպատկանող), որից՝		0.000	0.000	0.000
2861	8	6	1	Հանգիստ, մշակույթ և կրթի (այլ դասերին չպատկանող)		0.000	0.000	0.000
2900	9	0	0	ԿԸՔՈՒՅՑՈՒՆ (տող 2910 + տող 2920 + տող 2930 + տող 2940+ տող 2950 + տող 2960 + տող 2970 + տող 2980), այլ թվում՝		1051322.174	839288.200	212033.974
2910	9	1	0	Նախապարտքական և տարրական ընդհանուր կրթություն, որից՝		810024.179	641224.300	168799.879
2911	9	1	1	Նախապարտքական կրթություն		810024.179	641224.300	168799.879
				- Մուրախիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	625264.300	625264.300	0.000
				- Կուսակցային դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ ստևորային կազմակերպություններին	4655	15960.000	15960.000	0.000

				- Այլ կապիտալ դրամաշնորհներ (տող 4544 + տող 4547 + տող 4548), այդ թվում՝	4657	0.000	0.000	0.000
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	0.000	0.000	0.000
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	158799.879	0.000	158799.879
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	10000.000	0.000	10000.000
2912	9	1	2	Տարրական ընդհանուր կրթություն		0.000	0.000	0.000
2920	9	2	0	Միջնակարգ ընդհանուր կրթություն, որից՝		0.000	0.000	0.000
2921	9	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն		0.000	0.000	0.000
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	0.000	0.000	0.000
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	0.000	0.000	0.000
				- Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4655	0.000	0.000	0.000
2922	9	2	2	Միջնակարգ(ընդ) ընդհանուր կրթություն		0.000	0.000	0.000
2930	9	3	0	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն, որից՝		0.000	0.000	0.000
2931	9	3	1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն		0.000	0.000	0.000
2932	9	3	2	Միջին մասնագիտական կրթություն		0.000	0.000	0.000
2940	9	4	0	Բարձրագույն կրթություն, որից՝		0.000	0.000	0.000
2941	9	4	1	Բարձրագույն մասնագիտական կրթություն		0.000	0.000	0.000
2942	9	4	2	Հետբուհական մասնագիտական կրթություն		0.000	0.000	0.000
2950	9	5	0	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն, որից՝		241297.995	198063.900	43234.095
2951	9	5	1	Արտադպրոցական դաստիարակություն		241297.995	198063.900	43234.095
				- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	61257.200	61257.200	0.000
				- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	0.000	0.000	0.000
				- Էներգետիկ ծառայություններ	4212	2000.000	2000.000	0.000
				- Կոմունալ ծառայություններ	4213	332.100	332.100	0.000
				- Կապի ծառայություններ	4214	204.000	204.000	0.000
				- Ներքին գործուղումներ	4221	450.000	450.000	0.000
				- Արտասահմանական գործուղումների գնով ծախսեր	4222	200.000	200.000	0.000
				- Ներկայացուցչական ծախսեր	4237	0.000	0.000	0.000
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	360.000	360.000	0.000
				- Մասնագիտական ծառայություններ	4241	26.000	26.000	0.000
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	1600.000	1600.000	0.000
				- Գրասենյակային կյուբեր և հագուստ	4261	175.000	175.000	0.000
				- Գույքատնտեսական ապրանքներ	4262	0.000	0.000	0.000
				- Առուցադրահական և լաբորատոր կյուբեր	4266	70.000	70.000	0.000
				- Կենցաղային և հանրային սննդի կյուբեր	4267	200.000	200.000	0.000
				- Հատուկ նպատակային այլ կյուբեր	4269	2200.000	2200.000	0.000
				- Մուրփոխներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	128473.600	128473.600	0.000

				- Կապիտալ զրամաշնորհներ պետական և համալսարանների ոչ առևտրային կազմակերպություններին	4655	500.000	500.000	0.000
				- Պարտադիր վճարներ	4823	16.000	16.000	0.000
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	0.000	0.000	0.000
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	40234.095	0.000	40234.095
				- Վարչական սարքավորումներ	5122	0.000	0.000	0.000
				- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	0.000	0.000	0.000
				- Լախագծահետազոտական ծախսեր	5134	3000.000	0.000	3000.000
2952	9	5	2	Լրացուցիչ կրթություն		0.000	0.000	0.000
2960	9	6	0	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծախսություններ, որից՝		0.000	0.000	0.000
2961	9	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծախսություններ		0.000	0.000	0.000
2970	9	7	0	Կրթության ոլորտում հետազոտական և ևսխագծային աշխատանքներ, որից՝		0.000	0.000	0.000
2971	9	7	1	Կրթության ոլորտում հետազոտական և ևսխագծային աշխատանքներ		0.000	0.000	0.000
2980	9	8	0	Կրթություն (այլ դասերին չպատկանող), որից՝		0.000	0.000	0.000
2981	9	8	1	Կրթություն (այլ դասերին չպատկանող)		0.000	0.000	0.000
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱԼՈՒԹՅՈՒՆ (տող 3010 + տող 3020 + տող 3030 + տող 3040 + տող 3050 + տող 3060 + տող 3070 + տող 3080 + տող 3090), այդ թվում՝		20100.000	20100.000	0.000
3010	10	1	0	Վատատղջույթուն և անաշխատունակություն, որից՝		0.000	0.000	0.000
3011	10	1	1	Վատատղջույթուն		0.000	0.000	0.000
3012	10	1	2	Անաշխատունակություն		0.000	0.000	0.000
3020	10	2	0	Օերություն, որից՝		1000.000	1000.000	0.000
3021	10	2	1	Օերություն		1000.000	1000.000	0.000
				- Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	1000.000	1000.000	0.000
				- Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	0.000	0.000	0.000
				- Շենքերի և շինությունների ձեռքբերում	5111	0.000	0.000	0.000
3030	10	3	0	Հարազատին կորցրած անձինք, որից՝		0.000	0.000	0.000
3031	10	3	1	Հարազատին կորցրած անձինք		0.000	0.000	0.000
3040	10	4	0	Շտապօգնության անդամներ և զավակներ, որից՝		0.000	0.000	0.000
3041	10	4	1	Շտապօգնության անդամներ և զավակներ		0.000	0.000	0.000
3050	10	5	0	Գործազրկություն, որից՝		0.000	0.000	0.000
3051	10	5	1	Գործազրկություն		0.000	0.000	0.000
3060	10	6	0	Բնակարանային ապահովում, որից՝		0.000	0.000	0.000
3061	10	6	1	Բնակարանային ապահովում		0.000	0.000	0.000
3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), որից՝		19000.000	19000.000	0.000
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		19000.000	19000.000	0.000
				- Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	0.000	0.000	0.000
				- Հուղարկավորության նպաստներ բյուջեից	4726	2000.000	2000.000	0.000

				- Այլ նպաստներ բյուջեից	4729	17000.000	17000.000	0.000
				- Նվիրատվություններ այլ շահութա չենտագոսական կազմակերպություններին	4819	0.000	0.000	0.000
3080	10	8	0	Մոցիալական պաշտպանության ոլորտում ենտագոսական և նախագծային աշխատանքներ, որից՝		0.000	0.000	0.000
3081	10	8	1	Մոցիալական պաշտպանության ոլորտում ենտագոսական և նախագծային աշխատանքներ, որից՝		0.000	0.000	0.000
3090	10	9	0	Մոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝		100.000	100.000	0.000
3091	10	9	1	Մոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		100.000	100.000	0.000
3092	10	9	2	Մոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժառյակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		100.000	100.000	0.000
				- Այլ վարձատրություններ	4115	100.000	100.000	0.000
				- Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	0.000	0.000	0.000
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	0.000	0.000	0.000
				- Հատուկ նպատակային այլ կյաթեր	4269	0.000	0.000	0.000
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺՈՒՆԵՐԻՆ ՇՂԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այդ թվում՝		147597.862	294597.862	0.000
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից՝		147597.862	294597.862	0.000
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		147597.862	294597.862	0.000
				- Այլ նպաստներ բյուջեից	4729	0.000	0.000	0.000
				- Պահուստային միջոցներ (վարչական բ.)	4891	597.862	147597.862	0.000
				- Պահուստային միջոցներ (ֆոնդային բ.)	4891	0.000	0.000	0.000

ՏԵՂԵԿԱԹ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԳԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համայնքի ղեկավարը կազմում և համայնքի ավագանու հաստատման և ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, իսկ նույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համայնքի ավագանին հաստատում է համայնքի բյուջեն: Ղեկավարվելով վերոնշյալ իրավանորմերով Հրազդան համայնքի ղեկավարը ավագանու հաստատման և ներկայացնում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին նախագիծը:

Հրազդան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին Հրազդան համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Բյուջեի նախագիծը կազմվել է հիմնվելով խնայողականության, արդյունավետության, հաշվեկշռվածության, թափանցիկության, հավաստիության սկզբունքների վրա:

Բյուջեն, լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագիր, ուղղվում է տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը: Այն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծրագրերի ու միջոցառումների համապարփակ թվարկումն է ֆինանսական տարվա համար՝ ՏԻՄ-ի գործունեության յուրաքանչյուր բնագավառում: Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային և ծախսային հատվածներում կանխատեսումներն ու ծրագրավորումները իրականացվում են յուրաքանչյուր մասի համար առանձին:

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը ընդունելու արդյունքում ակնկալվում է եկամուտների և ծախսերի արդյունավետ կառավարում

(Ֆինանսական ճիշտ կատարում), ուղղության տարբեր ծրագրերի իրականացման պլանավորված մոտեցում և արդյունքների ձեռքբերում՝ միաժամանակ կիրառելով նոր որակի և մակարդակի կատարում:

Հրազդան համայնքի 2022 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

Եկամուտներ գծով՝ 3002778.129 հազար դրամ,

Օախսերի գծով՝ 3217819.603 հազար դրամ

Պակասուրդի գծով՝ 68041.474 հազար դրամ

1. Եկամուտների կանխատեսում.

Բյուջեի ընդամենը եկամուտներ տողում վարչական բյուջեի մասով ընդամենը նախատեսվել է 2103633.659 հազար դրամ գումարով պլան, որի մեջ մտնում են Հրազդան, Քաղսի, Սոլակ, Լեռնանիստ և Ջրառատ բնակավայրերի եկամուտների պլանները: Ֆոնդային բյուջեի ընդամենը եկամուտներ տողում պլանավորված 1046144.470 հազար դրամ պլանային թվի մեջ մտած է պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) պլանը 899144.470 հազար դրամի չափով և 147000.0 հազար դրամի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր տողի պլանային կանխատեսումը:

Հարկեր և տուրքեր.

Հարկեր և տուրքեր եկամուտների 2022 թվականի պլանը կազմում է 461014.0 հազար դրամ գումար, որի մեջ մտնում են հինգ բնակավայրերի հարկերի և տուրքերի պլանային թվերը: Ըստ բնակավայրերի պլանային թվերը կազմվել են հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի տեղական տուրքերի և վճարների 2022 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» որոշմամբ հաստատված դրույքաչափերը:

Պաշտոնական դրամաշնորհներ.

Պաշտոնական դրամաշնորհներ եկամուտների գծով կանխատեսվող պլանային թիվը կազմում է 1176816.700 հազար դրամ, որը Հրազդանի (987979.900 հազար դրամ), Ջրառատի (16589.700 հազար դրամ), Սոլակի (46944.0 հազար դրամ), Լեռնանիստի (65819.300 հազար դրամ), Քաղսիի (48673.0 հազար դրամ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների պլանների հանրագումարն է:

Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հասկացումներ եկամտի պլանը՝ 899144.470 հազար դրամով, կանխատեսվում է Հրազդան համայնքի նախորդ տարվա պլանավորված, սակայն ՀՀ պետական բյուջեից չտրամադրված պլանային գումարի չափով (սուբվենցիայի 32253.316 հազար դրամ ազատ մնացորդը և 859611.819 հազար դրամ): 859611.819 հազար դրամ պլանային թվից 597431.580 հազար դրամ գումարը ՀՀ կառավարության հրատապ ծրագրերով նախատեսված «Հրազդան համայնքի Հարավային թաղամասի Շահումյան փողոցի հիմնանորոգման» աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության, ինչպես նաև «Հրազդան համայնքի ճանապարհների 2572.0 մետր հատվածի (Ջրատառ թաղամասից դեպի «ՀրազդանՋԷԿ» 1264.0 մետր, 3-րդ փողոց 670.0 մետր, Պուրակային փողոց՝ 638.0 մետր) հիմնանորոգում» աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքների դիմաց վճարումների պլանային գումարներն են: Սուբվենցիոն ծրագրերով կատարված աշխատանքների համար վճարումների պլանային թիվ է նախատեսվել 262180.239 հազար դրամ՝ Հրազդան համայնքի բակային տարածքների և թաղամասերն իրար միացնող հատվածի ատոիճանավանդակի հիմնանորոգման աշխատանքների և Հրազդան համայնքի Միկրոշրջան, Մ. Բաղրամյան, Կենտրոն, Հարավային, Ջրատառ և Վանատուր թաղամասերի միջթաղամասային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների համար:

Այլ եկամուտներ.

Այլ եկամուտներ տողում պլանների կանխատեսումը կազմում է 465802.959 հազար դրամ, որն էլ իր մեջ ներառում է Հրազդան, Լեռնանիստ, Քաղսի, Սոլակ, Ջրատառ բնակավայրերի գույքի, հողերի վարձակալությունից եկամուտների պլանները: Համայնքի բյուջեի եկամուտներ սպրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամտի պլանը կազմում է 131286.200 հազար դրամ, որն իր մեջ ներառում է Հրազդան համայնքի բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններ և արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների ծնողական վճարների պլանները, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները:

Վարչական զանձումներ տողի պլանը կանխատեսվում է 151145.0 հազար դրամ, որը հավաքագրվելու է Հրազդան համայնքի մեջ մտնող բնակավայրերից զանձված տեղական

վճարներից՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի տեղական տուրքերի և վճարների 2022 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» որոշման:

Այլ եկամուտներ տողում նախատեսվել է եկամտի պլան, որի մեջ նախատեսվել է նաև դատարանի որոշումներով համայնքի բյուջե մուտքագրվող վճրի կատարման եկամտի պլան:

2. Ծախսերի կանխատեսում.

Ծախսային մասում պլանավորվել է 3217819.603 հազար դրամի ծախս , որից 2256672.694 հազար դրամը վարչական բյուջեով, 1108146.909 հազար դրամ ֆոնդային բյուջեով:

1.1.1.51 գործառնական դատակարգմամբ բացված օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում ծրագրով նախատեսվել է 406722.949 հազար դրամի ծախս, որից 352454.0 հազար դրամի ծախս է պլանավորվել վարչական բյուջեի տնտեսագիտական հոդվածներով, 54268.949 հազար դրամի ծախս ֆոնդային բյուջեի հոդվածներով:

Աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների գծով պլան նախատեսվել է 283698.0 հազար դրամի չափով՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 210 որոշմամբ հաստատված հավելվածի՝ վերջում 12 ամիսների համար, ինչպես նաև այդ պլանային թվին ավելացրել ենք Ջրատատ, Քաղսի, Լեռնանիստ, Սուլակ համայնքների աշխատակազմերի 2022 թվականի փետրվարի 21-ից հետո ազատվող աշխատակիցների աշխատավարձի, վերջնահաշվարկի, արձակման նպատոների վճարվելիք գումարները: Այդ տողը ներառում է Հրազդան համայնքի աշխատակազմի աշխատողների և Հրազդանի համայնքապետարանի «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի» աշխատողների աշխատավարձերի պլանները, հիմք ընդունելով նաև Հրազդանի համայնքապետարանի «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 217 որոշմամբ հաստատված հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Նախատեսվել են պարզնատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ մաքրուհիներին «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի» աշխատողների համար 2000.0 հազար դրամի սահմաններում:

Էներգետիկ ծառայություններ հողվածի պլանը ներառում է Հրազդան համայնքի վարչական շենքի, բնակավայրերի վարչական շենքերի Էներգետիկ ծառայությունների՝ գազի, էլեկտրաէներգիայի գծով ծախսերը: Կոմունալ ծառայությունների ծախսը 2000.0 հազար դրամով իր մեջ ներառում է ջրնուղ-կոյուղու գծով ծախսերը, Սոլակի աղբահանության ծախսը:

Կապի ծառայությունների գծով Հրազդան համայնքի և «ԷՍԷԼԿԱ ՔԸՆԵՔՇԸՆ» ՍՊ-ի հետ, «ՋԻ Էն ՍԻ Ալֆա» ՓԲԸ-ի հետ, «Տելեկոմ» ՓԲԸ-ի, ԱԶ Կարեն Հովհաննիսյանի, «ՌԱՋՆԵՏԿՈՍ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերի չափով նախատեսվել են պլաններ:

Նախատեսվել են ապահովագրական, գույքի և սարքավորումների վարձակալության պահպանման ծախսեր, գործուղման, աշխատակազմի մասնագիտական վերապատրաստման զարգացման ծառայությունների գծով ծախսեր: Տեղեկատվական ծառայությունների գծով կնքվում են պայմանագրեր «Պաշտոնական տեղեկագիր» ՍՊԸ-ի հետ, «Գործք» ՍՊԸ-ի հետ: Նախատեսվել են կառավարչական, մասնագիտական ծառայություններ, ներկայացուցչական ծախսեր:

Շենքերի և շինությունների կառուցում 5112 տնտեսագիտական հողվածով նախատեսվել է պլան 48068.949 հազար դրամ, որն իր մեջ ներառում է էներգախնայողության հիմնադրամի հետ կնքված Հրազդանի վարչական շենքի ջնառուցման համակարգի ներդրման 19999.950 հազար դրամ ծախսը, 28069.0 հազար դրամի սուբվենցիոն ծրագրով ավտոպարկի կառուցման գծով ծախսերը:

5122 հողվածով նախատեսվել է նիստերի դահլիճի միկրոֆոնների, բարձրախոսների և դրանց հետ կապված սարքավորումների ձեռք բերման ծախսերը:

5129 հողվածով նախատեսվել է ձեռք բերել հիմնական միջոցներ՝ գործիքներ:

5132 հողվածով նախատեսվել է Հրազդան համայնքի բնակավայրերի մանկապարտեզների և մշակույթի կենտրոնների համար ձեռք բերել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ծրագրեր: 5134 հողվածով նախատեսվել է ձեռք բերել ավտոպարկի կառուցման սուբվենցիոն ծրագրերի նախագծանախահաշվային աշխատանքների ծախսեր:

1.1.2.51 ծրագրով նախատեսվել է բանկային ծառայությունների գծով ծախսեր՝ 300.0 հազար դրամի սահմաններում:

1.3.1.51 աշխատակազմի գծով ընդհանուր բնույթի ծառայություններ ծրագրով 4111 տնտեսագիտական հողվածով նախատեսել ենք ծախս Արդարադատության նախարարության կողմից ֆինանսավորվող Հրազդանի ՔԿԱԳ ծառայությունների

իրականացման համար՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 210 որոշմամբ հաստատված պաշտոնային դրույքաչափերով վճարվող մասնագետների աշխատավարձը և այդ ծառայությունների իրականացման հետ կապված ծախսերը:

1.3.3 ծրագրով 4231 հողվածով նախատեսել ենք 3000.0 հազար դրամի չափով փաստաթղթերի արխիվացման ծախսեր, 4232 հողվածով 2200.0 հազար դրամի ծախսեր՝ «Վեկտոր-Պլյուս» ՍՊԸ-ի և «ՏՀԶՎԿ» հասարակական կազմակերպության հետ պայմանագրերով՝ իրականացնելու ծրագրային սպասարկումներ:

1.6.1.51 ծրագրով նախատեսել ենք ծախսեր 15000.0 հազար դրամի տահմաններում Հրազդան համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի, շենքերի և շինությունների չափազրման և սահմանված կարգով հատակագծերի կազմման ծառայությունների մատուցման համար: Այդ ծրագրով նաև նախատեսվել է 45886.2 հազար դրամի ծախս, «Հուղարկատիրությունների կազմակերպման, գերեզմանատների, հուշարձանների պահպանման և շահագործման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նախահաշվով պահպանման ծախսեր՝ հիմք ընդունելով 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 218 որոշումը:

4823 հողվածով նախատեսվել է 12000.0 հազար դրամի ծախս համայնքի հողամասերի և անշարժ գույքի պետական գրանցման, միասնական տեղեկանքների և այլ տեղեկատվության տրամադրման համար:

5133 հողվածով նախատեսված 6200.0 հազար դրամի ծախսը Լեռնանիստ բնակավայրի 2021 թվականի սուբվենցիան ծրագրով գլխավոր հատակագծի ձևով բերման ծախսն է:

2.5.1 Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), 2.1.51 Քաղաքացիական պաշտպանության, 3.2.1.51 Փրկարար ծառայություն ծրագրերով նախատեսված են ծախսեր՝ անհետաձգելի, արտակարգ իրավիճակների, տարերային աղետների ժամանակ բնակչության համար անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու համար:

4.2.1 Գյուղատնտեսության ծրագրով նախատեսվել են ռոտման ցանցի կառուցում սուբվենցիոն ծրագրի մասնակցությամբ 32000.0 հազար դրամի չափով՝ կապիտալ ծախսեր, 4262 հողվածով 1000.0 հազար դրամի սահմաններում գյուղատնտեսական ապրանքների ձևով բերման ծախսեր:

4.5.1.51 Ճանապարհային տրանսպորտ ծրագրով պլանավորվել է 1065612.945 հազար դրամի ծախս, որից 43000.0 հազար դրամը վարչական բյուջեով՝ փոստայցման և գծանշման աշխատանքների համար, 1022612.945 հազար դրամը՝ ֆոնդային բյուջեով: 5112 հողվածով պլանավորվել է սուբվենցիոն ծրագրով կանգառների կառուցման ծախս՝ 15500.0 հազար դրամի սահմաններում: 5122 հողվածով՝ 22000.0 հազար դրամի ծախս է պլանավորվել լուսացույցերի և տեսախցիկների ձեռք բերման նպատակով: 5134 հողվածով պլանավորվել է 3000.0 հազար դրամ նախագծանախահաշվային աշխատանքների ձեռք բերման նպատակով: 5113 հողվածով պլանավորվել է 982112.945 հազար դրամ գումար՝ նախորդ տարի կնքված պայմանագրերով ձեռք բերված սուբվենցիոն և հրատույ ծրագրերով կատարված (չֆինանսավորված) և այս բյուջետային տարում ավարտվելիք ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների համար:

5.1.1.51 Աղբահանության ծրագրով պլանավորվել է 415110.032 հազար դրամ գումարով ծախս, որից 258526.032 հազար դրամ ծախսը՝ «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սաննաքրում» հիմնարկի պահպանման նախահաշվով, 125984.0 հազար դրամով պլանավորվել է «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի նախահաշվով: «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սաննաքրում» հիմնարկի աշխատողների վարձատրությունը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել է 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 216 որոշմամբ: Պարգևատրման հողվածով նախատեսվել է 12000.0 հազար դրամի ծախս: 4214 հողվածով նախատեսվել է 144.0 հազար դրամ նամակահիշների ձեռք բերման ծախս՝ ծանուցագրերի համար, 4215 հողվածով 225.0 հազար դրամի ապահովագրական ծախս, 4216 հողվածով 11844.0 հազար դրամ գույքի վարձակալության ծախս՝ 14 միավոր մեքենաների վարձակալության համար: 4239 հողվածով պլանավորվել է 1500.0 հազար դրամի բնօրինակային ալյումինյան ծախս, 4252 հողվածով նախատեսվել է ծախս՝ մեքենաների ընթացիկ նորոգման համար, 4261 հողվածով պլանավորվել է 200.0 հազար դրամի գրասենյակային նյութերի ծախս, 1800.0 հազար դրամի չափով արտահագուստի ձեռք բերման ծախս, 4264 հողվածով 74931.7 հազար դրամի ծախս՝ տրանսպորտային նյութեր ձեռք բերելու նպատակով, 4267 հողվածով նախատեսվել են ախտահանիչ նյութերի ձեռք բերման ծախսեր՝ 100.0 հազար դրամի չափով, 4269 հողվածով պլանավորվել է ձեռք բերել աղ, ավազ և աշխատանքային գործիքներ: 4639 հողվածով պլանավորվել է ընթացիկ դրամաշնորհի 600.0 հազար դրամով Հրազդանի համայնքապետարանի և «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՄՊԸ-ի հետ կնքված պայմանագրով ծախսը կատարելու համար: 4823 հողվածով՝

բնապահպանական վճարն է: 5121 հոդվածով պլանավորվել է 22 Կառավարության հրատապ ծրագրերով խոշորացվող համայնքների համար բազմաֆունկցիոնալ մեքենաների ձեռք բերման համար համայնքի կողմից ներդրումային ծախս 30000.0 հազար դրամի սահմաններում, 5121 հոդվածով 2000.0 հազար դրամ և 5129 հոդվածով 500.0 հազար դրամի ծախս պլանավորվել է «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սաննաքրում» հիմնարկի նախահաշվով մեքենա սարքավորումների և այլ վարչական սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:

5.2.1 Կեղտաջրերի հեռացում ծրագրով պլանավորվել է 500.0 հազար դրամի խողովակների ձեռք բերման ծախսեր ջրահեռացման աշխատանքների կազմակերպման համար:

5.4.1 Կենսաբազմազանություն և բնության պաշտպանություն ծրագրով պլանավորվել է 5107.800 հազար դրամի ծախս՝ ընթացիկ սուբվենցիայի ծրագրով՝ համայնքի կանաչապատման և բարեկարգման նպատակով:

6.3.1 Ջրամատակարարման ծրագրով նախատեսվել է կապիտալ սուբվենցիոն ծրագրերով 5112 հոդվածով 10000.0 հազար դրամի չափով պլան համայնքի մասնակցության չափաբաժնով Լեռնանիստ բնակավայրում խմելու ջրի ջրազծի կառուցման աշխատանքների համար նախագծանախահաշվային աշխատանքների ծախս՝ 1000.0 դրամի չափով:

6.4.1.51 Փողոցների լուսավորում ծրագրով նախատեսվել է 4212 հոդվածով 50000.0 հազար դրամի ծախս, որում ներառված է համայնքի մեջ մտնող բնակավայրերի արտաքին լուսավորության և Հրազդան համայնքի Լներգախնայողության հիմնադրամի Լներգետիկ ծառայությունների ծախսերի պլանները: Այս ծրագրում ներառել ենք «Հրազդանքաղլույս» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսը՝ 71773.0 հազար դրամի ծախս:

6.4.1 ծրագրով նախատեսվում է մասնակցել 40000.0 հազար դրամի համայնքի մասնաբաժնով սուբվենցիոն ծրագրի Հրազդան համայնքում արտաքին լուսավորության ցանցի կառուցման նպատակով, որի աշխատանքների կատարման համար նախատեսել ենք 5134 հոդվածով 1000.0 հազար դրամի չափով նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման ծախսեր: 5113 հոդվածով պլանավորվել է արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքների ծախս:

6.6.1 Ծրագրով պլանավորվել է 147500.0 հազար դրամ գումարի ծախս, որից 100000.0 հազար դրամը բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման համար սուբվենցիոն ծրագրով համայնքի կողմից ֆինանսավորվող մասն է, 30000.0 հազար դրամը Հրազդան քաղաքի N 83 բազմաբնակարան շենքի տանիքի կապիտալ վերանորոգման նպատակով, 5134

հողվածով այդ աշխատանքների նախագծանախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար պլանավորված ծախսն է: 4269 հողվածով պլանավորվել է 10000.0 հազար դրամի ծախս նպատակային կյուբերի, այդ թվում իզոգամի և թիթեղի ձեռք բերման համար: 5129 հողվածով նախատեսվում է ձեռք բերել այլ վարչական սարքավորումներ:

7.6.2 Առողջապահության ծրագրով նախատեսել ենք 300.0 հազար դրամի ծախս համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին առողջության պահպանման, բուժօգնության նպատակով:

8.1.1 Հանգստի, սպորտի ծառայություններ ծրագրով 4252 հողվածի պլանով նախատեսել ենք նստարանների ընթացիկ նորոգման ծախս, 5112 հողվածով նախատեսել ենք 30000.0 հազար դրամի սահմաններում սուբվենցիոն ծրագրով գրոսայգու բնի կապիտալ կառուցման ծախս, որի համար պլանավորել ենք 5134 հողվածով 2000.0 հազար դրամի նախագծահաշվային աշխատանքների ծախս: 5129 հողվածով պլանավորել ենք ձեռք բերել կարուսելներ՝ խաղահրապարակների համար:

8.2.3 Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ ծրագրով պլանավորել ենք «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Հրազդանի համայնքային գրադարան» ՀՈԱԿ-ի, Սուլակի և Լեռնանիտի մշակույթի տների պահպանման ծախսերը: 5113 հողվածով Սուլակի մշակույթի տան հիմնանորոգման նպատակով նախորդ տարի կերված պայմանագրի շրջանակներում աշխատանքների ֆինանսավորման համար է:

8.4.2 Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ ծրագրով նախատեսված 3000.0 հազար դրամ պլանի մեջ ներառել ենք «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը նվիրատվություն 720.0 հազար դրամի չափով և «Երեխաների աջակցության հիմնադրամ» կազմակերպությանը նվիրատվություն 240.0 հազար դրամի չափով:

9.1.1 Նախադպրոցական կրթության ծրագրով պլանավորել ենք 810024.179 հազար դրամի ծախս, որից սուբսիդիա 625264.3 հազար դրամի սահմաններում, 4655 հողվածով 15960.0 հազար դրամի չափով էներգախնայողության հիմնադրամին՝ ջեռուցման համակարգերի ներդրման ֆինանսավորման համար: 5113 հողվածով նախատեսվել է 150000.0 հազար դրամի սուբվենցիոն ծրագրով համայնքի մանկապարտեզների կապիտալ հիմնանորոգման աշխատանքների ծախս, 5134 հողվածով 10000.0 հազար դրամի այդ աշխատանքների համար նախագծահաշվային աշխատանքների ծախսերի ֆինանսավորման նպատակով: 5113

հողվածով պլանավորել ենք 2021 թվականին Հրազդանի թիվ 4 մանկապարտեզի հիմնանորոգման սուբվենցիոն ծրագրով ֆինանսավորված 8799.879 հազար դրամի ծախս:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների տարեկան աշխատավարձը հաշվարկվել է հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 211 որոշումը, որի համաձայն տարեկան աշխատավարձը կազմում է 399415.6 հազար դրամ: Կապի ծառայության տարեկան գումարը կազմում է 792.0 հազար դրամ: Մանկապարտեզի 1 երեխայի համար էլեկտրաէներգիայի և ջեռուցման տարեկան ծախսը կազմում է 10.0 հազար դրամ: Մանկապարտեզի 1 երեխայի համար նախատեսվել է օրական 30 լիտր ջուր: Չջեռուցվող մանկապարտեզներում 1 խմբի ջեռուցման ծախսը կազմում է 40.0 հազար դրամ: Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով 1 երեխայի համար նախատեսվել է 2.0 հազար դրամ ծախս: Գրասենյակային նյութերի ձեռք բերման համար 1 խմբի հաշվով տարեկան նախատեսվել է 20.0 հազար դրամ: Մասնագիտական ծառայություն, որից դեռատիզացիայի համար ծախս նախատեսվել է ամսական 5.0 հազար դրամ, բուժզննման համար նախատեսվել է տարեկան 940.0 հազար դրամ ծախս: Գազի սպասարկման համար նախատեսվել է տարեկան 682.0 հազար դրամ: 1 երեխայի համար հաշվարկվել է օրական 300 դրամ սենդամբերքի ծախս: Կենցաղային նյութեր ձեռք բերելու համար 1 խմբի հաշվով նախատեսվել է 40.0 հազար դրամ: Հատուկ նպատակային նյութեր ձեռք բերելու համար 1 երեխայի հաշվով նախատեսվել է տարեկան 2.0 հազար դրամ:

Արտադպրոցական դաստիարակության հաստատությունների տարեկան աշխատավարձը հաշվարկվել է հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 211 որոշումը, որի համաձայն տարեկան աշխատավարձը կազմում է ՀՈԱԿ-ների համար 193360.5 հազար դրամ, բյուջետային հիմնարկների համար 78903.2 հազար դրամ: Էլեկտրաէներգիայի և ջեռուցման տարեկան ծախսը կազմել է ՀՈԱԿ-ների համար 7660.0 հազար դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 2000.0 հազար դրամ, ջրամատակարարման տարեկան ծախսը ՀՈԱԿ-ների համար կազմել է 471.7 հազար դրամ, իսկ բյուջետային հիմնարկների համար՝ 332.1 հազար դրամ: Կապի ծառայության տարեկան ծախսը ՀՈԱԿ-ների համար կազմել է 322.0 հազար դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 204.0 հազար դրամ: Ներքին գործուղումները բյուջետային հիմնարկների համար կազմում է 450.0 հազար դրամ: Տեղեկատվական ծառայություններ գծով տարեկան ծախսը ՀՈԱԿ-ներում կազմում է 590.0 հազար դրամ: Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար տարեկան նախատեսվել է ՀՈԱԿ-ների համար 12020.0 հազար դրամ, բյուջետային

հիմնարկների համար՝ 610.0 հազար դրամ: Մասնագիտական ծառայությունների գծով ՀՈԱԿ-ների համար նախատեսվել է տարեկան 240.0 հազար դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 26.0 հազար դրամ: Գրասենյակային նյութերի ձեռք բերման համար ՀՈԱԿ-ներում նախատեսվել է 450.0 հազար դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 275.0 հազար դրամ: Կենցաղային նյութեր ձեռք բերելու համար նախատեսվել է՝ ՀՈԱԿ-ների համար 465.0 հազար դրամ, բյուջետային հիմնարկների համար 700.0 հազար դրամ: Հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման համար ՀՈԱԿ-ներում նախատեսվել է 1760.0 հազար դրամ, բյուջետային հիմնարկներում՝ 3600.0 հազար դրամ: Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման համար նախատեսվել է ՀՈԱԿ-ում 1600.0 հազար դրամ, բյուջետային հիմնարկների համար 6600.0 հազար դրամ: Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման համար ՀՈԱԿ-ներում նախատեսվել է 80.0 հազար դրամ: Կապիտալ դրամաշնորհներ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսվել է 1000.0 հազար դրամ, բյուջետային հիմնարկների համար 500.0 հազար դրամ: Արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվող յուրաքանչյուր երեխայի համար մատուցված ծառայությունների դիմաց գանձվող տեղական վճարի չափը սահմանվել է Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 09 որոշման համաձայն:

9.5.1 Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով ներառել ենք Վահե Զարարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոնի, Արտակ Ռաֆայելյանի անվան սպորտ դպրոցի, Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի, Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի, Առևտ Բաբաջանյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի, Կոստան Զարյանի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ-ի, Երվանդ Քոչարի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերը: Այդ ծրագրում նախատեսել ենք սուբվենցիոն ծրագրով Կոստան Զարյանի անվան արվեստի դպրոցի շենքի տանիքի և Առևտ Բաբաջանյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոցի պատերի ամրացման աշխատանքներ 35000.0 հազար դրամի չափով, 5234.095 հազար դրամ գումարով պլանավորել ենք 2021 թվականին սուբվենցիոն ծրագրով Առևտ Բաբաջանյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոցի հիմնանորոգման պայմանագրով կատարված, սակայն չֆինանսավորված մասը: 5134 հոդվածով 3000.0 հազար դրամի սահմաններում պլանավորել ենք նախագծահաշվային աշխատանքների ձեռք բերման ծախսեր:

10.2.1 Ծերություն ծրագրով նախատեսել ենք ծերերի ժամանցի վայրերի վարձակալության գումար:

10.7.1 Սոցիալական հատուկ արտոնություններ ծրագրով նախատեսել ենք 4726 հոդվածով 2000.0 հազար դրամ ծախս՝ հուղարկավորության նպատակով, 4729 հոդվածով 17000.0 հազար դրամի այլ նպաստներ բնակչությանը:

10.9.2 Վարձատրվող հասարակական աշխատանքներ ծրագրով նախատեսել ենք 4115 հոդվածով 100.0 հազար դրամի այլ վարձատրությունների գծով ծախս:

11.1.2 Հրազդան համայնքի բյուջեի վարչական մասում պահուստային ֆոնդ ծրագրով նախատեսել ենք 147597.862 հազար դրամի պահուստային միջոցներ, որից 147000.0 հազար դրամը ուղղելու ենք ֆոնդային բյուջե՝ մանկապարտեզների հիմնանորոգման սուբվենցիոն ծրագրերը ֆինանսավորելու համար:

Տարեսկզբի ազատ մնացորդը 68041.474 հազար դրամ ուղղվում է 2022 թվականի ծախսերի ծածկմանը, որից Հրազդան համայնքի 2022 թվականի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 35728697.8 դրամը, ամբողջությամբ ուղղվում է 2022 թվականի բյուջեի ֆոնդային մաս: Իսկ Քաղսի, Սուլակ, Լեոնանիստ և Ջրատառ բնակավայրերի տարեսկզբի ազատ մնացորդի 6039.035 հազար դրամ գումարը ուղղել բյուջեի վարչական մասի ծախսերի ծածկմանը՝ բնակավայրերի նախորդ տարվա կոմունալ և այլ ծախսերի գծով պարտքերի մարմանը:

Քանի որ համայնքի բյուջեն՝ տեղական ինքնակառավարման մարմին՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագիր է, որով սահմանվում են նկատմաների և ծախսերի կատարման նորմատիվները, հետևաբար բյուջեն հաստատելու վերաբերյալ սովազանու որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ՝ պարունակելով վարքագծի պարտադիր կանոններ համայնքապետարանի աշխատակազմի, ենթակա կազմակերպությունների, համայնքի տարածքում գործունեություն ծավալող իրավաբանական անձանց և տնտեսվարող սուբյեկտների, համայնքի բնակիչների համար և ուղղված է կարգավորելու ՏԻՄ-ի վարած քաղաքականությունը ֆինանսական պլանավորում՝ նկատմաներ ակնկալող և ծախսեր պահանջող բոլոր ոլորտներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՐԱԶԴԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐԶ

Հրազդան համայնքի 2022 թվականի բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2022-2026 թվականների հեղափոխ գարգացման ծրագիրը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ համաքաղաքումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Համայնքի 2022 թվականի բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝ բարձրացնել համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը, բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները՝ ակնկալելով եկամուտների և ծախսերի արդյունավետ կառավարում, իրականացնել մշակութային և երիտասարդական միջոցառումների ծրագրեր՝ աշխուժացնելով համայնքի բնակիչների առօրյա կյանքը, աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը, իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր, բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը, կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, ճանապարհային տնտեսության բնագավառներում՝ համայնքի մեջ մտնող բնակավայրերի ճանապարհների հիմնանորոգման, նոր կանգառների կառուցման, նախադպրոցական և արտադպրոցական կրթության ոլորտում, մշակույթի ոլորտներում:

Համայնքի 2022 թվականի գարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական շահերի սպասնովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ և բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու գարգացմանը, ինչպես նաև համայնքի զլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Տարեսկզբի ազատ մնացորդը 68041.474 հազար դրամ ուղղվում է 2022 թվականի ծախսերի ծածկմանը, որից Հրազդան համայնքի 2022 թվականի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 35728697.8 դրամը, ամբողջությամբ ուղղվում է 2022 թվականի բյուջեի ֆոնդային մաս: Իսկ Քաղսի, Սոլակ, Լեռնասևիստ և Ջրառատ բնակավայրերի տարեսկզբի ազատ մնացորդի 6039.035 հազար դրամ գումարը ուղղել բյուջեի վարչական մասի ծախսերի ծածկմանը՝ բնակավայրերի նախորդ տարվա կոմունալ և այլ ծախսերի գծով պարտքերի մարմանը:

Հրազդան համայնքի բյուջեի վարչական մասում պահուստային ֆոնդ ծրագրով նախատեսել ենք 147597.862 հազար դրամի պահուստային միջոցներ, որից 147000.0 հազար դրամ ուղղելու ենք ֆոնդային բյուջե՝ մանկապարտեզների հիմնանորոգման սուբվենցիոն ծրագրերը ֆինանսավորելու համար:

Ես դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանուն, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի

2022 թվականի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային և հոսքեական օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

